ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն (քաղաք Մոսկվա)

2021 թ. Մարտի 16--ից մարտի 18-ը ներառյալ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Ալֆրեդ Քոչարյան

Անի Արևշատյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ (պարտականություններ կատարող)

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն (քաղաք Մոսկվա) 2021 թվականի մարտի 16-ից մարտի 18-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝**

MITT Moscow 2021 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպչական թիմ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Ցուցահանդեսին Կոմիտեի նախագահի այցի հիմնական նպատակն էր տեղում գնահատել տվյալ ցուցահանդեսին պետական աջակցությամբ մասնակցության ապահովման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Scanned by TapScanner

6. Քննարկված թեմաները

Քննարկումներ են տեղի ունեցել մի շարք երկրների ներկայացուցիչների հետ հետագա հնարավոր փոխհամագործակցության եզրեր գտնելու նպատակով: Քննարկման հիմնական թեմաները առընչվում էին համագործակցային ճանապարհով զբոսաշրջության զարգացմանն ու Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, մասնավորապես՝ Ռուստուրիզմի ղեկավար Զարինա Դոգուզովանի և Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանի հետ: Վերջինիս հետ հանդիպման արդյունքում քննարկվեցին զբոսաշրջության ոլորտում ներկայիս իրավիճակի պայմաններում առկա խնդիրներն ու դրանց լուծման մեխանիզմները զբոսաշրջության զարգացումն ու բարելավումն ապահովելու նպատակով:

Տեղի են ունեցել հանդիպումներ նաև հայտնի լրատվամիջոցների ներկայացուցիչների և բլոգերների հետ, քննարկվել են վերջիններիս մասնակցությամբ դեպի Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպման միջոցով Հայաստանի, որպես բարենպաստ զբոսաշրջային ուղղության ճանաչելիության բարձրացման ձևաչափերը:

Այցի ընթացքում տեղի է ունեցել հանդիպում նաև ВДНХ-ում գտնվող Армения տաղավարի ղեկավար անձնակազմի հետ, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագա սերտ համագործակցության ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ 2021 թվականի ընթացքում սերտ համագործակցությամբ մշակել նոր ձևաչափեր Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի ավելացմանը նպաստելու

Scanned by TapScanner

նպատակով, իսկ լրատվամիջոցների հետ հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ կազմակերպելու հայտնի լրատվական ընկերությունների և մի քանի 100 հազարից ավել հետևորդ ունեցող բլոգերների այցեր դեպի Հայաստան:

Այցի շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում առաջարկվել է համագործակցել Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում ВДНХ զբոսայգում տեղակայված հայկական տաղավարի կազմակերպիչների հետ, մասնավորապես՝ փոխհամագործակցությունը օգտագործել Ռուսական զբոսաշրջային շուկայում Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով:

Ժամկետ՝ 2021 թվականի հունիս, ակնկալվող արդյունք՝ Հայաստան զբոսաշրջային հոսքերի վերականգնում

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ալֆրեդ Քոչարյան

Անի Արևշատյան

25.03. 2021

Scanned by TapScanner